

Թեան, երկարաբանութեան ասպետ, երբ զաղափարներու լեռնաշղթաներ կը հաւատար, թէ կը խուզարկէր: Անոր բաժանո՛ւմը իր ընկերներէն, որոնք ճեմարանական կամ ոչ, անշուշտ նուազ կ'արժէին, քան ինքը, քանի որ անկարող էին իրենց անձէն հրաժարելու: Այդ ընկերները նուազ հաւատաւո՛ր՝ երբ իրենց հանգիստը չխանգարելու, այլեւ պաշտպանելու անձնդիւր պարապումը, կը սիրէին քաղաքականութիւն ալ ծախել, մեծ պետութիւններու դիւանագիտական հաշիւները հասկնալ ու մեր դատին անվերադարձ կորուստը վճռել: Իր ընկերները անշուշտ նուազ կտրիճ էին, ինչպէս կը խօսէին յայտնի հոգեբանութեամբ, ամէն մէկը առնուազն մէկուկէս անգամը Մաթիկին, երբ իրենց մեծ բռունցքներուն մէջ կը սեղմէին անոր զոյգ ձեռքերը, մեծաղաղակ ճիչի հանելով անոր մատները:

-Երթար բարո՛ւ վ...

Յետո՞յ:

Հեզնութիւնը չէր քալեր առաջ, վերադարձի ճամբուն: Երիտասարդներ էին ու դիտէին, թէ որքան քիչ էր թիւը ետ դարձողներուն:

-Երթար բարո՛ւ վ:

Ու լրջութիւն: Ու պզտիկ խոնաւնալ մը աչքերու: Տրամութիւն ու լուութիւն: Է՛. խեղճ արարածներ էին իրենք: Բայց ոչ այնչափ «փճացած», ինչպէս թերեւս պիտի ուզէր եզրակացնել ստուտենտ Մաթիկը: Իրենք ալ պիտի շարունակէին ծառայել շատ «սիրուց» լղրճուած իր ժողովուրդին, իրենց գրասենեակներուն ապահովութենէն ու իրենց ռոճիկներէն կամ շահերէն:

«Ումն է դրամ իւր»: «Ումն է արիւն իւր»: Այսպէս չէ տարազած անշուշտ մեղքէն իր սարսափը մեր Նարեկացին: Բայց Մաթիկին ընկերները, մեծ մասով ճեմարանական, Նարեկացիին նորոյթը հեշտագին կը սիրէին արժեւորել:

Մինչեւ սահմանագլո՞ւխ: